ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՆՈՐԱՀԱՅՏ ՏՎՅԱԼՆԵՐ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մարմաշենի կաթողիկե եկեղեցու հարդարանքի մեջ ուրույն տեղ են գրավում հյուսիսային պատի արևմտյան որմնախորշի զարդերը: Սա նույնպես ընդհանուր առմամբ մշակված է մյուսների նման. երկու կողմից բարակ և սլացիկ զույգ կիսասյուների վրա հանգչում է պրոֆիլավոր կամարը: Սակայն կամարի ներսի կողմում որմնախորշի հարդարանքը տարբեր է մյուսներից: Փոքր խորշը զարդարված է կիսաշրջանաձև ճառագայթներով: Մեծ խորշում նույնպես ճառագայթներ են փորված, սակայն, ի տարբերություն փոքրի, դրանք ուռուցիկ են: Սրանք վերջանում են կլոր շրջանաձև քանդակներով, որոնք նման են կիսասյուների, ընդհանրապես եկեղեցին զարդարող մյուս զարդանախշերին: Սակայն ամենահետաքրքիրը սրանց և վերևի գոտու միջև եղած տարածության ներսում արված քանդակներն են: Այստեղ գալարվող որթի վրա մեկընդմեջ փորված է խաղողի ողկույզ և տերև: Խաղողի ողկույզի հատիկները փոքր են, իսկ տերևը՝ լայն: Հետաքրքիրն այն է, որ միայն այս որմնախորշն է, որ այսպես է քանդակված: Դժվար է ասել, թե սա կատարվել է նորոգման ժամանակ, քանի որ մյուս որմնախորշերի կամարների վրա նորոգման հետքեր չկան:

Խաղողի քանդակը, որ այնպես լայնորեն տարածված էր VII դ. ճարտարապետական կոթողների հարդարանքի մեջ, X-XI դդ. կոթողների հարդարանքում քիչ է հանդիպում: Ճիշտ է, դրանք հանդիպում են ավելի ուշ շրջանի խաչքարերի վրա: Հատկանշական է, որ վերը նկարագրված որմնախորշերի մշակումները նույն ձևն ունեն, ինչ Շիրակավանի եկեղեցու քանդակները: Վերջինս Բագրատունյաց շրջանի վաղ կառույցներից է (սակայն այստեղ բացակայում է խաղողի որթը):

Ընդհանրապես պետք է նկատել, որ Մարմաշենի կաթողիկե եկեղեցին կառուցման, հավանաբար նաև հատակագծային լուծումների և հատկապես հարդարանքի մեջ բավականաչափ պահպանողական է: Հետաքրքիրն այն է, որ այս որմնախորշը կենտրոնական տեղ չի զբաղեցնում, այսինքն ոչ մի բանով մյուս որմնախորշերից առավել չէ ո՛չ իր դիրքով, ո՛չ էլ ֆունկցիայով: Ավելին, եթե միաժամանակ և կամ մի փոքր ուշ են կառուցել հյուսիսային եկեղեցին, ապա այս որմնախորշը վատ է դիտվել ժամանակին, որովհետև հյուսիսային եկեղեցին փակել է նրա տեսադաշտը: Իսկ եթե հյուսիսային եկեղեցին կառուցվել է ավելի վաղ, այս դեպքում առավել ևս դժվար է հասկանալ այս խորշի քանդակների իմաստը:

Կարելի է ենթադրել, որ նախապես մտածել են բոլոր վեց խորշերն էլ այս ձևով քանդակազարդել և այն սկսել են այս խորշից, սակայն հետագայում հրաժարվել են այդ մտքից՝ հաշվի առնելով ժամանակի հակումներն ու ճաշակը:

Հատկանշական է նաև, որ Մարմաշենի համալիրում, բացի այս եկեղեցու քանդակներից, ուրիշ հուշարձանների վրա չեն հանդիպում խաղողի որթեր ոչ միայն ավերված ու կիսավեր եկեղեցիների, այլև կանգուն հուշարձանների վրա: Այս հանգա-

մանքը մի անգամ ևս հաստատում է այն միտքը, որ Մարմաշենի կաթողիկեն ավելի վաղ է կառուցվել:

Շիրակավանի եկեղեցին կառուցել է Սմբատ I-ը (890-914 թթ.), այսինքն այն IX-X դդ. պատկանող շինություն է: Այստեղ ևս չկան խաղողի քանդակներ: Հակառակ սրանց, 915-921 թթ. կառուցված Աղթամարի եկեղեցու քանդակների մեջ մեծ տեղ է գրավում խաղողի ողկույզը[1]:

Եկեղեցու կամարները երկկենտրոն են: 1973 թ. պեղումների ժամանակ կաթողիկե եկեղեցու հարավային մասում բացվեց ստիլոբատ՝ 4 շարք, յուրաքանչյուր շարքի բարձրությունը 36 սմ, իսկ լայնությունը՝ 20 սմ: Բացվեցին տափակ գերեզմանաքարեր, որոնց վրա զարդ կամ արձանագրություն չկա, բացառությամբ մեկի:

Հարավային եկեղեցուց 50 մ հեռավորությամբ ավելի ուշ կառուցված վանքի պարիսպն է շարված մոտ 1 մ լայնությամբ, պատահական քարերով, որոնց մեջ կան նաև քանդակազարդ քարի բեկորներ և 70x50 սմ չափերով մի խաչքար: Պահպանվել է խաչքարի ներքևի կլոր գնդի մի մասը: Կլոր գնդիկներով և խաչթևերի միջև եղած քանդակ ուլունքաշարով զարդանախշման այս ոճը շատ նման է կաթողիկե եկեղեցու մուտքի և բեմի ուլունքաշարին:

Նորակառույց պարսպի հարավային մուտքի մոտ, աջ կողմում, դրված է քանդակազարդ խոյակ, տրամագիծը 1 մ, որի կողքին նույնպես քանդակազարդ խաչքարի բեկոր կա:

Ինչպես բոլոր, այնպես էլ հարավային պատը բարձրանում է 4 ստիլոբատների վրա, որոնց վրա էլ դրված են զույգ կիսասյուների հիմքերը կամ խարիսխները՝ մոտ 35 սմ բարձրությամբ: 46 սմ լայնությամբ ձևավոր մասի վրա բարձրանում են կիսասյուները: Պատի շարքի քարերն, ավելի քան 2 մ բարձրություն ունեն: Կիսասյուներից յուրաքանչյուրի լայնությունը 20 սմ է, որոնք բարձրանալով մոտ 6 մ՝ ձևավորվում են որպես խոյակ՝ կիսագնդաձև զարդերով:

Յուրաքանչյուր կիսագնդաձև ելուստի վրա երկուական շրջանաձև զարդեր են արված, որոնց վրա էլ նստում է կամարի հիմքը: Վերջինս կազմված է տարբեր հարթությունների վրա արված երկու կիսակլոր ելուստներից, որոնք համարյա թե պայտաձև են: Այս կամարի կենտրոնական մասում պատուհանի բացվածքը շքեղ քանդակներով է: Սրա երկու կողմերը զարդարում են կիսասյուների ավելի բարակ ու կարճ աղեղները, որոնք պսակվում են երկկենտրոն կամարով՝ տարբեր հարթությունների կիսակլոր ելուստներով: Այս երկու կամարների միջև ուղղանկյուն փորվածք է՝ եզերված նորից կիսակլոր ելուստներով:

Պատուհանի ներքևի մասը՝ կիսասյուների ամբողջ բարձրությամբ ու լայնությամբ հորիզոնական ելուստազարդ մշակման է ենթարկված: Սրանից ներքև փորագրված է մեծ արձանագրություն, որը, դատելով կատարված աշխատանքներից, արվել է նախօրոք պատրաստված տեղում, և վերի ելուստազարդերը այդ արձանագրության սկիզբն են նախանշում:

Անշուշտ եկեղեցին կառուցողները չէին կարող իմանալ, թե արձանագրությունը որ-

[1] Խաղողի ողկույզի և տերևի քանդակներ գտնվեցին Մարմաշենի վանքից մոտ 1 կմ հարավ գտնվող եկեղեցու պեղումների ժամանակ, որը սակայն պատկանում է VII դ.:

քան տեղ է զբաղեցնելու, որպեսզի ներքևում, այսինքն արձանագրության վերջում ևս այն անջատեին կամ զարդարեին ելուստազարդերով (մի քանի տասնամյակ անց Մարիամ Աբխազաց թագուհին ավելի մանր արձանագրություն է փորագրել տալիս այս նույն պատի արևմտյան անկյունում, սակայն նույն բարձրության վրա): Այս կենտրոնական արտաքին կամարն աջ ու ձախ կողմերից պարուրված է խորը եռանկյունի որմնախորշերով, որոնց եզրավորում են նույնպիսի զույգ կիսասյուներ, որոնք պսակված են կիսակլոր կամարներով: Վերջիններս տարբեր հարթությունների վրա հինգ կիսակլոր ելուստներով են զարդարված: Որմնախորշի խորքում, կամարի տակ, ճառագայթաձև զարդ է: Եռանկյունաձև խորշն իրականացված է երկու հարթությամբ: Ներքևում ատամնավոր, նույնպես փոքր զարդեր են, որոնց միջև կլորավուն ելուստներ են:

Համանման լուծումներով է քանդակազարդված նաև հյուսիսային ճակատը, որը, սակայն, ունի միայն մեկ պատուհան կենտրոնում, որի հարդարանքը, հարավայինի հետ համեմատած, այնքան էլ ճոխ չէ, բացի այդ, պատուհանի բացվածքն առնված է ուղղանկյուն շրջանակի մեջ, որը տարբեր հարթություններում կլորավուն ու ակոսավոր ելուստներից է բաղկացած:

Այս պատուհանից ներքև փորագրված է 1225 թ. 21 տողանոց արձանագրությունը, որին նույնպես ջանացել են տալ հարավային պատի արձանագրությանը համապատասխան տեսք:

Սա ևս տեղադրված է ճակատի կենտրոնական մասում, պատուհանից անմիջապես ներքև, և գրեթե նույնքան տեղ է զբաղեցնում, որքան հարավային ճակատի մեծ արձանագրությունը: Սակայն սրա տեսադաշտը փակվում է հյուսիսային եկեղեցով, այդ պատճառով չունի նախորդի շքեղությունը: Ամենամեծ տարբերությունն այս երկու ճակատների միջև կայանում է նրանում, որ արևմտյան խորշը բոլորովին այլ հարդարանք ունի: Բոլոր հինգ խորշերը վերևում պսակվում են տարբեր հարթությունների վրա գտնվող ելուստավոր կամ աղեղնավոր կամարով, իսկ պատի հորիզոնական հարթության վրա քանդակված են խաղողի ողկույզներ և որթ, որոնց միջև ոչ թե խաղողի տերև է, ինչպես VII դ. կառույցներում, այլ երկու անկյուններում եղևնաձև պատկերներ են: Երկու եկեղեցիների միջև բնակելի շինություններ կառուցելու արդյունքում արձանագրությունը ենթարկվել է ավերումների:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏԸ: Այս ճակատի կենտրոնում ևս կա պատուհանի բացվածք, որից աջ և ձախ եռանկյունի որմնախորշեր են: Սրանց բացվածքը, հարավայինի և հյուսիսայինի հետ համեմատած, ավելի նեղ է: Պատուհանի բացվածքը եզերված է շրջանակով, որը պատի ընդհանուր մակերեսից մոտ 5 սմ դուրս է: Շրջանակի մեջ հիմնականում երեք շարքով դասավորված են 5-6 սմ տրամագծով ներգծված շրջանակներ, որոնցում հավասարաթև խաչեր են և վարդյակներ: Ընդ որում, վերին մասում գերակշռում են խաչի, իսկ ներքևի մասում՝ վարդյակների պատկերները: Այս եռանկյունաձև խորշը, ինչպես նաև, հավանաբար, մյուս խորշերը, ծառայում են հայ մեծանուն բանաստեղծ և մտածող Գրիգոր Նարեկացու հիշատակին ժողովրդի կողմից առ այսօր կատարվող պաշտամունքի արարողությանը: Ինչպես երևում է, Մարմաշենի Կաթողիկե եկեղեցու առաջնորդները (Երեմիան և Սոսթենեսը), նախաձեռնությունը վերցնելով իրենց ձեռքը, բազմաթիվ ձեռագրեր են գրել ու արտագրել, այդ

թվում նաև՝ Նարեկը: Այս ձեռագրերի մեծ մասը պահվում են շրջակա գյուղերում:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏԸ: Սա ևս կիսասյուներով, սլացիկ կամարներով է: Մշակումը նման է մյուսներին, սակայն գլխավոր տարբերությունն այն է, որ այս ճակատում որմնախորշ չկա: Կենտրոնական կամարն ավելի լայն է, քան արևելյան ճակատի համապատասխան կամարը և մյուսների համեմատ ավելի քան 1 մ բարձր է (արևելյան ճակատի բոլոր կամարները միևնույն բարձրությունն ունեն): Այս կենտրոնական կամարի տակ տեղադրված է պատուհանի բացվածքը՝ եզերված քանդակազարդ լայն գոտիով: Բացվածքը շրջանակված է երկշարք ուլունքաշար քանդակներով, որոնք ավելի խորն են փորագրված, քան ճակատի մասում են: Ամենայն հավանականությամբ այդ արվել է քանդակազարդի տեսանելիությունն ապահովելու համար:

Սուրբ Աստվածածին կաթողիկե եկեղեցու ներսը ուղղանկյուն դահլիճ է, որի գմբեթը հենվում է կիսասյուների վրա (ի տարբերություն Անիի կաթողիկեի, որի գմբեթը կենտրոնում կրում են չորս առանձին կանգնած սյուները): Դրանք պատի հարթությունից բավական առաջ են գալիս (մոտ 2.4 մ): Հարավային ու հյուսիսային որմնասյուների միջև եղած հեռավորությունը 5.8 մ է, իսկ նույն սյուների միջև արևելքից-արևմուտք՝ 5.7 մ: Ներսի տարածությունը կառուցվածքով ավելի մոտ է 10.6 մ կողի երկարությամբ քառակուսու, իսկ բեմի հետ միասին՝ 18 մ:

Հյուսիսային ավանդատան վերին մասում կա մի փոքր խորշ՝ երկու բաժանմունքով: Ավագ խորանը բարձր է 1.1 մ-ով, հավանաբար այն կրկնակի սալապատվել է: Այդ են վկայում բեմի դիմացի պատի քանդակազարդ քարերի վրա եղած սալերը: Դրանք վերանորոգման արդյունք են, որովհետև քանդակների մի մասը ամբողջական չեն, ինչպես նաև նորոգման ժամանակ տեղադրվել են նոր քանդակներով քարեր:

Մարմաշենի վանքը: Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի արձանագրությունը տեղի առումով կարդալու համար հարմար չէ: Ինչպես երևում է, Հյուսիսային եկեղեցին կառուցվել է ավելի ուշ և Վահրամ Պահլավունու վանքի համալիրի կառուցմանը ժամանակակից չէ: Հ. Օրբելին այն կարծիքին է, որ շենքը կառուցվել է XIII դարում:

Արձանագրության մեջ Վահրամ Պահլավունու թոռը՝ Գրիգոր արքեպիսկոպոսը, փաստում է, որ 1225 թ. վանքը նորոգել է և միավորել վարի վանքի հետ: Ստացվում է, որ Վահրամ Պահլավունու ժամանակ վերի վանք կոչվածն առանձին էր: Մարմաշենում, ինչպես և այլ վայրերում տեղի է ունենում բնակավայրերի մեծացում-ընդլայնում: Մարմաշենի համար չունենք ուղիղ վկայություն գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ անվանման մասին: Սակայն իրողությունն այն է, որ ինչպես Կումայրին և մյուսները, Մարմաշենը ևս դառնում է տարածքային առումով մեծ բնակավայր: Թե ի՞նչ հզորություն կամ թուլություն է ձեռք բերում, դա այլ հարց է:

Անհրաժեշտ է նշել, որ վանականները ջանք չեն խնայել պաշտպանելու երկիրն օտար նվաճողներից, Հայոց աշխարհին հատկապես արևմուտքից սպառնացող՝ Բյուզանդիայից տարածվող ու պարտադրվող հայակուլ կրոնական նկրտումներին: Այսպես են վարվել դեռևս VII դ. Դպրեվանքի առաջնորդները՝ Բարսեղ ճոնի գլխավորությամբ: Բագրատունյաց թագավորության հետագա տարիների ընթացքում այս վանքերն իրենց կենտրոնի դերն ավելի են ուժեղացրել: Մարմաշենի վանքի կառուցումից հետո առաջնությունը կամաց-կամաց անցնում է վանքում գործող Երեմիայի և նրան որ-

դիացյալ Սոսթենեսի գլխավորությամբ գործող վանականների խմբին: Նրանք սերտ կապերի մեջ են մտնում ինչպես Հառիճի, այնպես էլ Կումայրիի ու Երազգավորսի առաջնորդների հետ: Դպրեվանքը ժամանակի ընթացքում ընդլայնվելով ավելի է տարածվում թե՛ հյուսիս, թե՛ հարավ, արևմուտք ու արևելք: Փաստորեն Անի մայրաքաղաքից հյուսիս ողջ տարածքը, ներառյալ նաև Աշոցքը, Դպրեվանքի բաղկացուցիչ մասերն էին: Օտար արշավանքների հետևանքով հարյուրավոր խաչքարեր կործանվել և միայն պատվանդաններն են մնացել (հատկապես Տիրաշեն-Դպրեվանք հատվածում): Շիրակի ողջ տարածքում բնակիչների մոտ պահվում են ձեռագրեր (ամենաշատ Մարմաշեն, Վահրամաբերդ, Կապս գյուղերում), Կարմիր Ավետարան, Նարեկ և այլն:

Վանքի հարավային պատին փորագրված է Վահրամ Պահլավունու արձանագրությունը: Այն չափազանց կարևոր է, և սխալված չենք լինի, եթե ասենք, որ այն Պահլավունու ամենակարևոր վկայագիրն է: Այն մի տեսակ ամփոփագիր է Պահլավունյաց ցեղի և մասնավորապես Վահրամի ու այդ գերդաստանի գործունեության: Այդ է պատճառը, որ արձանագրության տեղին այդքան մեծ կարևորություն է տրված, բացի այդ, այն փորագրված է շատ գեղեցիկ տառերով: Հատուկ ուշադրության է արժանացել տողերի կառուցվածքը: Արձանագրությունը փորագրված է հարավային պատի կենտրոնական մասում, որի արդյունքում շատ լավ տեսանելի է և անմիջապես ուշադրություն է գրավում: Այն կազմված է տասնութ տողից:

Հարավային և հուսիսային պատերը զարդարված են սլացիկ կիսասյուներով, վերևում՝ երկկենտրոն աղեղներով կազմված կամարներով: Սրանք հինգն են: Կենտրոնականը, որն ամենալայնն է, 4.5 մ և ավելի գերազանցում է եզրերի կիսասյուների լայնությանը միասին վերցրած (լայն. 3 մ 60 սմ): Բնականաբար, սրա կամարն էլ մյուսներից բարձր է: Մյուս պատերի նման, հարավայինն էլ բարձրանում է չորս ստիլբոատների վրա, որոնց վրա էլ դրված են զույգ կիսասյուների հիմքերը կամ խարիսխները՝ մոտ 35 սմ բաձրությամբ և 46 սմ լայնությամբ: Սրանից ավելի քան 2 մ բարձրության վրա սկսվում է ձևավոր զարդանախշը և տեղադրված կիսասյուները, որոնցից յուրաքանչյուրի լայնությունը 20 սմ է, և որոնք, բարձրանալով մոտ 3 մ, ձևավորվում են որպես կիսագնդաձև զույգերով խոյակներ՝ յուրաքանչյուր ելուստի վրա երկուական շրջանաձև զարդերով: Հենց սրանց վրա էլ նստում է կամարի հիմքը:

Վահրամաշեն Կաթողիկե եկեղեցու մեծ արձանագրությունը ներկայացնում է ոչ միայն Պահլավունյաց տոհմի, այլ նաև Բագրատունյաց թագավորների խտացված քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային պատմությունը:

Պարզվում է, որ Վահրամն այդ բոլորի հետ մեկտեղ կառուցողն է, ինչպես Ամբերդի, այնպես էլ Մարմաշենի, Անիի ու Բագրատունյաց թագավորության պաշտպանական համակարգերի: Միջնադարում թագավորն իրավունք ուներ կառուցելու քաղաք, բերդ, կամուրջ, կարևոր ճանապարհներ (Ամբերդ եկող Արքաշեն-Արխաշան): Վահրամ Պահլավունին բացառիկ իշխան է, որը ոչ միայն կառուցել, այլև հոգացել է թագավորության պահպանության համար: Տրդատ ճարտարապետն ի զորու չէր անմիջական մասնակցություն ունենալ Մարմաշենի և մյուս կառույցների շինարարությանը: Հնացած պետք է համարել իշխանների, թագավորների ու թագուհիների պատվիրատու լինելու գաղափարը. Կատրամիդեն՝ Անիում, Խոսրովանույշը՝ Սանահին-

Հաղպատում, Սոփիան՝ Սյունիքում և Վայոց Ձորում, Սմբատ Տիեզերակալն ու Գագիկը՝ պետության ողջ տարածքում ակտիվ մասնակիցն են եղել բոլոր կառույցների իրականացմանը:

Պահլավունյաց ցեղը կարողացավ պահել իր կենսունակությունն ու կառուցեց Հռոմկլա, Լամբրոն, Լնբերդ ամրոց-քաղաքները: Եթե սրան ավելացնենք Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տղայի և մեր մշակույթի մի շարք այլ գործիչների տիտանական աշխատանքը, բուն Հայաստանում թագավորության վերացումից հետո՝ վառ պահել դարերով մշակած ու հղկած մշակույթի ջահը և դրանով դիմագրավել, այս անգամ արդեն Եվրոպայից եկող խաչանշան ունեցող նոր նվաճողներին, ապա պարզ և հասկանալի կդառնա Գրիգոր Մագիստրոսի ժլատ, բայց դիպուկ մի քանի նախադասությունների իմաստը, որով բնութագրում է կենտրոնաձիգ իշխանության համար իր և իր որդի Գրիգորի արյունը Դվնո պարիսպների տակ հեղած Վահրամի մասին:

Հետաքրքիր է Տիրաշենի ամրոցի տարածքում պեղված № 3 դամբարանը: Տուֆ քարից պատրաստված կափարիչի զարդերը հար և նման են շրջապատի ժայռանշաններին: Դամբարանից հայտնաբերված նյութը թվագրվում է մ.թ.ա. VII-VI դդ.: Հատկանշական է զարդարված ձիու գլուխը, որը դրված էր մշակված տուֆ քարի վրա: Տիրաշենի միջնաբերդ ամրոցից արևմուտք գտնվող չափավոր մեծության եկեղեցին ինչպես արտաքինից, այնպես էլ ներքուստ խաչաձև է: Այն հայտնի է վաղ միջնադարից: Սրանց կտուրները ծածկված են եղել կղմինդրով, ինչից էլ վստահաբար կարող ենք եզրակացնել, որ գործ ունենք երկրորդ վերածննդի ժամանակաշրջանի հետ: Բագրատունյաց թագավորության ընթացքում Անի մայրաքաղաքը դարձավ վերոհիշյալ վերածնության կենտրոն: Մարմաշենը այդ տիպի լավագույն հուշարձաններից է: Ախուրյանի ձորի, հատկապես ձախափնյա հուշարձանները, որոնցից մոտ մեկ տասնյակ հայտնաբերվել է պեղումներով, դրա վառ ապացույցն է: Տիրաշենի վերոնկարագրյալ, դրսից և ներսից խաչաձև հատակագծով կառույցն այդ շրջանին է վերագրվում:

Անդրադառնանք և այն հարցին, թե ինչու է տաճարն այդ տեղում կառուցվել: Հիշենք, որ տաճարից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա VII դ. կառուցվել էր Դպրեվանքը: Հիշենք նաև, որ X-XI դարերում այն լրացվել է այլ կառույցներով, որոնք մասամբ խախտել են հինը: Այդպիսին են ինչպես Շիրակի, այնպես էլ հանրապետության այլ շրջանների հուշարձանները: Այդ տեսակետից առանձնապես հատկանշական են Սյունիքն ու Լոռին: Վերջինիս Հաղպատ-Սանահին հուշահամալիրի կառուցապատման մեջ կիրառված է նույն սկզբունքը: Ուրեմն՝ ինչպես Բագրատունյաց թագավորության հիմնական միջուկը կազմող Շիրակում, այնպես էլ վասալական կախման մեջ գտնվող Կյուրիկյան և Արցախ-Սյունիքի ճարտարապետական արվեստի վրա խիստ ազդել է նույն ոճը: Հարավից՝ Վասպուրականից եկած Մանվել ճարտարապետի ուրույն ոճը խառնվել է վերոհիշյալին: Այսպիսով, ստացվում է հետևյալ պատկերը. Բագրատունիների օրոք Դպրեվանքը չի սահմանափակվել միայն իր հիմնական վայրով, այլ ընդգրկել է Մարմաշենը՝ այս անգամ գրչության կենտրոնների մեջ ունենալով նաև Մարմաշենի, Կումայրիի, Երազգավորսի, Մայիսյանի, Հոռոմի,

Խծկոնքի, Սաղմոսավանքի վանական համալիրները[2]:

Մարմաշենի կաթողիկե եկեղեցու վրա դրսի կողմից կա երեք մեծ արձանագրություն: Սրանցից մեկը՝ 1-ինը, փորագրված է հարավային պատին, կենտրոնում, և լրացնում ու հարստացնում է հուշարձանի հարդարանքը: Արձանագրությունը գեղեցիկ և ճաշակով է գրված ոչ միայն տառերի, այլև տեղադրման իմաստով: II արձանագրության հարավային պատի աջ անկյունում տեղադրված է Աբխազաց և Հայոց թագուհի Մարիամի վկայագիրը, որով վերջինս մեղքերի թողություն է խնդրում Աստծուց իր պապ՝ Գագիկ I Բագրատունու համար:

Արձանագրության մեջ հիշատակվում են բազմաթիվ այգիներ, որոնք նվիրաբերվել են վանքին: III արձանագրությունը փորագրված է հյուսիսային պատի կենտրոնում: Առաջին երկու արձանագրությունները ժամանակային առումով իրար շատ մոտ են: Առաջինը գրված է 1029 թ., իսկ երկրորդը՝ 1-2 տասնամյակ հետո: Դրանով է բացատրվում նաև նրանց տառաձևերի նմանությունը: Օրինակ, գրեթե երկու տեքստերում էլ Հ, Զ, Ց և Թ տառերը նույն ձևով են փորագրված: Պետք է նկատել, որ արձանագրությունները փորագրված են նույն ոճով: Երկուսն էլ սկսվում են «**ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ**» արտահայտությամբ, և անմիջապես գալիս է արձանագրությունը գրողի անունը (մի դեպքում Վահրամ, մյուս դեպքում՝ Մարիամ) և տիտղոսներն ու ծագումը:

Ի տարբերություն վերոնկարագրյալների՝ երրորդ արձանագրությունը փորագրված է 1225 թ., որի պատճառով էլ, հավանաբար, խիստ տարբերվում է առաջին երկուսից թե՛ տեքստի ոճաբանական և թե՛ տառաձևերի առումով: Այսպես. այս արձանագրության Ն տառի գլխիկն ավելի ուղղաձիգ է և երկար, իսկ ներքին մասը՝ նեղ: I և II արձանագրություններում Զ-ի գլխիկը ձվաձև է և աջ մասում այն շարունակվելով ցած՝ ներքևի մասում միանում է հորիզոնական գծին: Իսկ երրորդ արձանագրության մեջ այս նույն տառն ունի գրեթե մաքուր շրջանաձև գլխիկ, որը ներքևի մասում ուղղահայաց գծով միանում է հորիզոնական մասին: Պետք է փաստել մի իրողություն ևս, այն, որ երկու արձանագրություններն էլ երկաթագիր տառաձևերով են:

Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին, մուտքից վերև, ձախ կողմում գրված է.

«***ԻՆՀ (1021) ԹԻՒ ԵՍ ՄԱՏԱԹԵ ԿԱՆԳՆԵՑԻ...»:*** Արձանագրության մեջ նշված Մատաթեն, հավանաբար, եկեղեցու կառուցման հետ առնչվող կարևոր անձերից է: Բացառված չէ նաև, որ նա հենց կառուցող վարպետն է: ***ԿԱՆԳՆԵՑԻ*** բառը հիմնականում գործածվում է խաչքարերի համար, սակայն այս դեպքում բոլոր հիմքերը կան կարծելու, որ խոսքը եկեղեցու կառուցմանն է վերաբերում:

Ենթադրվում է, որ ա) արձանագրությունը կարող էր գրվել միայն շինության ավարտից հետո, բ) Մատաթեն Պահլավունի չէ, որովհետև նրա աճյունն ամփոփված չէ Մարմաշենում՝ Պահլավունիների հանգստարանում, գ) 1021 թ. Մարմաշենի վանքի հիմնական համալիրի կառուցումն ավարտված էր:

Կաթողիկեի հարավային պատին փորագրված արձանագրությունը հաստատում է վերոբերյալ ենթադրությունները.

---

[2] **Թորոս Թորամանյան**, Հայկական ճարտարապետություն, Երևան, 1942, էջ 63, 64, 70, 73, 74, 171-172, 226-227, 236, 243, 251-267:

«*ԵՍ ՎԱՀՐԱՄ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԻ ...ՀԻՄՆԱԴՐԵՑԻ ՍՈՒՐԲ ՈՒԽՏՍ ՄԱՐՄԱՇԷՆ ԻՆԼԷ (988) ԹՎԱԿԱՆԻՆ*»: Շինարարությունը տևել է բավական երկար՝ մոտ 40 տարի: Այն ժամանակ սովորություն կար ամեն ինչ նվիրել հոգու փրկությանը: Այդպես էլ գրում է Վահրամը՝ հայոց Գրիգոր իշխանի որդին: Շինարարությունն իրականացվել է անթերի տաշված քարերի շարվածքով (արձանագ. 1): Շինարարական աշխատանքներին մասնակցել են Վահրամ Պահլավունու մայրը՝ տիկնաց տիկին Շուշիկը, եղբայրը՝ Համզեն, որը նահատակվեց թուրքերի դեմ մղվող պատերազմում, Վասակը, որը զոհ դարձավ 1120-ական թթ. Ջալալ Էդ Դինի արշավանքների ժամանակ:

Երևի թե այս ամենն էլ հիմք են ծառայել արձանագրության այն տողերի, որ *ՄԵՔ ՄԵՐ ԵՒ ՄԵՐ ՈՐԴԻՆԵՐԻ ԱՐԵԱՆ ԳՆՈՎ ԽՆԴՐԵՑԱՔ ԱՇԽԱՐՀԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ*:

Արձանագրության մեջ Վահրամ Պահլավունին իրեն համարում է Գրիգոր Լուսավորչից սերված .

«...*Ի ՑԵՂԷՆ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ ԵՒ Ի ՋԱՐՄԻՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ*»[3]:

Լեոն կարծում է, որ Պահլավունիներն իրենց համարում են Կամսարականներից սերած, քանի որ Մամիկոնյանների աղջիկը նույնպես կնության էր տրված Կամսարականներին: Այստեղ մեծ նշանակություն կարող էր ունենալ Բագրատունի և Մամիկոնյան ցեղերի հակամարտությունը: Չմոռանանք նաև, որ Բագրատունիներն իրենց վերելքի ճանապարհին մեռած Գրիգոր Մամիկոնյան իշխանի գլուխը կտրեցին և ներկայացրեցին արաբներին:

Մանանդյանը, խոսելով թուրք-սելջուկների կողմից Հայաստանը գրավելու մասին, բերում է XI դ. արաբ պատմիչ Իբն Ալ Ասիրի մանրամասն վկայությունները: Ըստ այդ տեղեկությունների, Մարմաշենն անվանվել է Մարիամնիշին, այսինքն Սուրբ Մարիամին նվիրված եկեղեցի, որն ունեցել է ամրապատ պարիսպներ և պաշտպանված է եղել մեծ գետով: Ակադեմիկոս Մառի «Անի» աշխատության մեջ այս բերդ-քաղաքը թյուրիմացաբար նույնացված է Անի քաղաքի հետ[4]: Բայց իրապես, Մարիամնիշինը, ինչես կռահել է Մարկվարտը, Գյալինճայում գտնվող Մարմաշենի վանքն է, որ կառուցել է Վահրամ Պահլավունին 988-1029 թթ.:

Վանքի հիմնադրմանը, ըստ հարավային պատի արձանագրության (արձանագ. 3), կենդանի մասնակցություն է ցույց տվել «*Աբխազաց և Հայոց Մարիամ թագուհին, որը Արծրունյաց Մենեքերիմ թագավորի դուստրն էր, Բագրատունյաց Գագիկ Ա թագավորի թոռը և Վրաց ու Աբխազաց Բագրատ Դ թագավորի (1027-1072 թթ.) մայրը*»[5]:

Ղ. Ալիշանը կարծում է, որ նույն այս Գյալինճայում և Մարմաշենում պետք է լիներ Վահրամ Պահլավունու կառուցած ամրապատ ու աշտարակապատ դղյակը, որոնց մասին սանահնեցիներին գրած իր թղթերում Գրիգոր Մագիստրոսն ունի հետևյալ վկայությունը. *«ԵՒ ԴՂԵԿԱՑ ՍՔԱՆՉԵԼԻ ԵՒ ԱՄՐԱՊԱՏ ՊԱՐԻՍՊՕՔ ՅԱՐԱՄԱ-*

---

[3] Նույն ցեղից էին Մամիկոնյան Քաջ Վարդանը և Մուշեղը: Վերջինս առաջարկում էր Հայաստանը վերածել ամրոցներով պատված ռազմական ճամբարի:

[4] **Ն. Մառ,** Անի, էջ 26:

[5] **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Երևան, 1952, էջ 56, 57:

ՆԵԱԼ»[6]:

Մարիամնիշինի պարիսպներին թուրքերը մոտեցել են նավակներով, Ախուրյան գետի կողմից, և կռիվներից հետո կարողացել են գրավել քաղաքը: Ներխուժելով քաղաք՝ սելջուկները ոչ միայն կոտորել են բնակչությանը, այլև հրդեհել ու քանդել են քաղաքի շինությունները: Իբն Ալ Ասիրը գրում է. «***Մելիք շահն ու Սիմ Ալ Մուլքը առաջ շարժվեցին դեպի Մարիամնիշին քաղաքը, որի մեջ կային շատ վարդապետներ, քահանաներ, իշխաններ և քրիստոնյա ռամիկ ժողովուրդ, որոնք ապավինել էին այդ քաղաքի բնակչության պաշտպանությանը: Սա ամրացրած քաղաք էր, որի պարիսպը մեծ պինդ քարերից էր, որ իրար էին միացած երկաթով ու կապարով: Սրա մոտ գտնվում էր մի մեծ գետ: Նիզամ Ալ Մուլքը պատրաստեց նավեր և այն ամենը, ինչ որ հարկավոր էր քաղաքի դեմ պատերազմ վարելու համար և մարտ մղեց նրա դեմ, որ շարունակվում էր օր ու գիշեր: Նա տեղավորեց զորքերը քաղաքի շուրջը և սրանք կռվում էին փոխնիփոխ: Այնուհետև անհավատները սկսեցին անհանգստանալ և խիստ հոգնեցին ու ուժասպառ եղան»***[7]:

Մարմաշենի մասին մեր մատենագիրների թողած վկայությունները կցկտուր են: Սակայն դրա փոխարեն վիմական արձանագրությունները (արձանագ. 2) առատ նյութ են մատակարարում ինչպես վանքի, այնպես էլ նրա տարբեր ժամանակների պատմության վերաբերյալ[8]:

Սամուել Անեցին նույնպես շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում համալիրի հիմնադրման ժամանակի մասին: Այս տեղեկությունները հետագա դարերի պատմիչները գրեթե կրկնում են՝ կատարելով որոշ սրբագրումներ: Այդպես են վարվել XIII դ. Գրիգոր Գանձակեցին, Վարդան պատմիչը և այլք:

ԴՐԱՄՆԵՐ: Պեղումների ընթացքում Մարմաշենի վանքի հյուսիսային եկեղեցու հյուսիս-արևմտյան կողմում հայտնաբերվեցին բյուզանդական դրամներ: Դրանք երկուսն են՝ պատրաստված բարձրորակ ոսկե թիթեղից, բազմանիստ, մեկը 2.7 սմ, իսկ մյուսը՝ 5 սմ տրամագծով: Երկուսն էլ պատկանում են Կոստանդին VIII կայսերը, որը գահակալել է 1025-1028 թթ.: Դրամները տարբեր փորագրության կնիքներով են դրոշմված, սակայն երկուսն էլ թողարկվել են Կոստանդնուպոլսում, այդ պատճառով էլ ոչ միայն չափերն են տարբեր, այլև դրանց երեսին դրոշմված պատկերները: Մեկի վրա Կոստանդին կայսրը կրում է թագ՝ մինչև ուսերը իջնող ծոպերով: Թագի վերևում խաչ է պատկերված: Կայսրը մորուքով է, հագին ունի զրահ և ձեռքին՝ թագավորական գայիսոն: Պատկերն առնված է կրկնակի շրջանակի մեջ, որի ներսում փորագրված են լատիներեն տառեր՝ ***KONSTANTINUS CEZAR***. Մյուս դրամն ունի նույն արձանագրությունը: Դրոշմված դեմքը (Կոստանդին թագավորի) ավելի նեղ ու երկար է, զրահի մանրամասներն է՛լ ավելի ցայտուն են: Դրամի հակառակ երեսին պատկերված է լուսապսակի մեջ ներգծված խաչի վրա Հիսուս Քրիստոսը: Մազերը երկար են, դեմքը՝ մորուքով, լավ ընդգծված են ուսերը և հագի շորերը: Ձախ ձեռքին ինչ-որ բան ունի (հավանաբար՝ Ավետարան):

Դրամները հայտնաբերվել են վանքի հյուսիսային եկեղեցու տարածքի վաղ շեր-

---

[6] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 141:

[7] Օտար աղբյուրները հայերի մասին:

[8] Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցւոյ, Երևան, 1963, էջ 51-58, 62:

տում՝ մայր հողի վրա, որից կարելի է եզրակացնել, որ նախկինում այս մասը բնակեցված չի եղել: Քանի որ վանքի շինարարությունը սկսվել է 998 թ. և ավարտվել 1029 թ., ուստի դրամներն էլ համապատասխանում են այդ շրջանին: Հատկանշական է նաև, որ վայրը, որտեղից գտնվել են դրամները, քիչ ավելի բարձր է, քան հյուսիսային եկեղեցու հիմքերը:

Ինչ խոսք, որ կարևոր է նաև այն հանգամանքը, որ դրամների գյուտով ժամանակագրվում են շերտից հայտնաբերված առարկաները: Դրանք ջնարակած թասերի, բարձր նստուկով կարմրախեցի քրեղանների բեկորներ են, ինչպես նաև՝ ձիթաճրագներ:

ԵՐԿԱԹԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ: Սրանց մեջ մեծ թիվ են կազմում զանազան գամերը, կենդանիների պայտերը, տարբեր ժամանակներին վերաբերող դանակներ, քարգործ վարպետի գործիքներ: Գամերը կամ մեխերը տարբեր տեսակի ու չափերի են: Մեծ թիվ են կազմում պայտերը, որոնց ուսումնասիրությունը հաստատում է տեղում խոշոր եղջերավոր անասնապահության, հատկապես ձիաբուծության զարգացած լինելու փաստը:

Դանակներ: Սրանք ներկայացված են երկու խմբով.

1) սովորական ուղիղ տարբեր չափերի և

2) ծալովի դանակներ:

Վերջիններից շատ են գտնվել Դվինի պեղումներից: Մարմաշենից հայտնաբերվածների մեջ մեծ թիվ են կազմում նաև սովորական դանակները[9]: Ծալովի դանակների մեջ կան նաև կեռ շեղբ ունեցողները: Սրանք տարբեր նպատակների են ծառայել, հիմնականում օգտագործվել են կաշեգործության, ինչպես նաև տարբեր գործիքներ պատրաստելու համար: Մարմաշենից հայտնաբերվել են դանականման այլ գործիքներ, որոնց նշանակությունն այնքան էլ պարզ չէ:

[9] Ամբերդի պեղումներից նույնպես մեծ թվով ուղիղ դանակներ են հայտնաբերվել: **Ս. Հարությունյան**, Ամբերդի 1963 թ. պեղումները, Էջմիածին, էջ 196: